ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացրած երեք որոշումներ՝ ընթացիկ տարվա գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման, գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման և մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերը հաստատելու մասին:

Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման գործում հողօգտագործողներին աջակցելու նպատակով շուրջ երեք տարի հաջողությամբ իրականացվում են սերմնաբուծության և սերմարտադրության, ինչպես նաև դիզելային վառելանյութի և ազոտական պարարտանյութի մատչելի գներով ձեռքբերման պետական աջակցության ծրագրերը:

Ծրագրերի արդյունավետությունը և շարունակականությունն ապահովելու ու 2014 թվականի գարնանացանի աշխատանքների իրականացման գործում հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերելու նպատակով որոշվել է.

• սերմացուների նկատմամբ պահանջարկը բավարարելու մասով՝ արտերկրից ձեռք բերել 1978,7 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 168,35 տոննա կապույտ առվույտի, 189,96 տոննա կորնգանի և 23,44 տոննա եգիպտացորենի սերմացուներ, իսկ տեղական սերմ արտադրողներից՝ 150 տոննա էլիտային վերարտադրության գարնանացան գարու սերմացու, որոնց տրամադրումը կատարվելու է 1 կգ-ի համար սահմանված հետևյալ գներով՝ գարի՝ 200 դրամ, առվույտ՝ 1500 դրամ, կորնգան՝ 370 դրամ, եգիպտացորեն՝ 350 դրամ /այս գները շուկայականից ցածր են 30-50%- ով :

• դիզելային վառելանյութի պահանջարկը բավարարելու մասով՝ հանրապետություն ներկրել 17,641,565.0 լիտր դիզելային վառելանյութ՝ մեկ լիտրը 350 դրամ արժեքով հողագործներին տրամադրելու նպատակով, որը շուկայական գներից ցածր է 30%- ով:

• պարարտանյութերի պահանջարկը բավարարելու մասով՝ ձեռք բերել 33821.95 տոննա ազոտական, 2645,2 տոննա ֆոսֆորական և 1618,9 տոննա կալիումական պարարտանյութեր, որոնցից ազոտականինը՝ 1 պարկը 6000 դրամ, որը շուկայականից ցածր է 30% - ով , ֆոսֆորական և կալիումականինը՝ 7000 դրամ, որը շուկայականից ցածր է 50% -ով :

Ձեռքբերման գործընթացների վերաբերյալ

1. Հողօգտագործողներին 2014 թ. գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի մրցույթն իրականացվել է բանակցային ընթացակարգով:

Մրցույթի հրավեր ստացել են 22 կազմակերպություն:

Մրցույթի հայտ ներկայացրել են 5 կազմակերպություն, որոնց հետ վարվել են բանակցություններ:

Բանակցությունների արդյունքում հաղթող է ճանաչվել՝

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը
"Донской АгроХим Центр"	Գարնանացան գարի – 299,62 դր. /1 կգ/
	Եգիպտացորեն – 575.75 դր. /1 կգ/
	Առվույտ - 2350 դր. /1 կգ/
	Կորնգան – 730, 25 դր. /1 կգ/

2013 թ. ձեռքբերված և 2014 թ. առաջարկված գներ

2013 թվական	2014 թվական
Գարնանացան գարի – 340.0 դր. /1 կգ/	Գարնանացան գարի – 299,62 դր. /1 կգ/
Եգիպտացորեն – 583.0 դր. /1 կգ/	Եգիպտացորեն – 575.75 դր. /1 կգ/
Առվույտ - 2493 դր. /1 կգ/	Առվույտ - 2350 դր. /1 կգ/
Կորնգան – 628.0 դր. /1 կգ/	Կորնգան – 730, 25 դր. /1 կգ/

2. Հողօգտագործողներին 2014 թ. գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերումն իրականացվել է մրցակցային հիմունքներով:

Մրցույթի հրավեր ստացել են 12 կազմակերպություն:

Մրցույթի հայտ ներկայացրել են 2 կազմակերպություն:

Բանակցությունների արդյունքում հաղթող են ճանաչվել՝

Մասնակցի անվանումը	Պարարտանյութերի անվանումը	Առաջարկված գինը
Մասիսի Բերրիություն		
	Ամոնիակային սելիտրա 34.4 %	7870 դր. /50կգ./
<<Հրաշք Այգի>> ՍՊԸ		
	Կրկնակի սուպերֆոսֆատ 46%	11000 դր. /50կգ./
	Կալիումական աղ 60%	11700 դր. /50կգ./

2013 թ. ձեռքբերված և 2014 թ. առաջարկված գները

2013 թվական	2014 թվական
Ամոնիակային սելիտրա 34.4 % - 7944 դր	Ամոնիակային սելիտրա 34.4 % - 7870 դր
Կրկնակի սուպերֆոսֆատ 46% - ձեռք չի բերվել	Կրկնակի սուպերֆոսֆատ 46% - 11000 դր. /50կգ./
Կալիումական աղ 60% - ձեռք չի բերվել	Կալիումական աղ 60% - 11700 դր. /50կգ./
Նշված պարարտանյութերի ամբողջ քանակի բեռնափոխադրում ՀՀ մարզեր, 6500 դրամ/տոննա	Նշված պարարտանյութերի ամբողջ քանակի բեռնափոխադրում ՀՀ մարզեր, 6250 դրամ/տոննա

3.Հողօգտագործողներին 2014 թ. գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերումն իրականացվել է մրցակցային հիմունքներով:

Մրցույթի հրավեր ստացել են 28 կազմակերպություն:

Մրցույթի հայտ ներկայացրել են հետևյալ 3 կազմակերպությունները.

Անվանումը	Առաջարկված գինը
«ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորէյշն» ՍՊԸ	440 դր
«Մաքսիուր» ՍՊԸ	450 դր
«Ֆլեշ» ՍՊԸ	438 դր

Հաղթող է ճանաչվել.

Անվանումը	Առաջարկված գինը
«Ֆլեշ» ՍՊԸ	438 դր

2013 թ. ձեռքբերված և 2014 թ. առաջարկված գները

2013 թվական	2014 թվական
440 դր	438 դր